ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«31» օգոստոսի 2023 թ.

Տնօրեն՝ Digitally signed by OSEPYAN MILENA Օսեպյան Մ.Վ.

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 6-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Հարությունյան Կարինա Ռաֆաելի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) *Դասարանը բաղկացած է 11 աշակերտից՝ վեց տղա և հինգ աղջիկ: Դասարանը համախմբված կոլեկտիվ է: Սովորողները ունեն վառ երևակայություն, հստակ, իրերի և երևույթների նկատմամբ անսահման հետաքրքրություն ցուցաբերելու կարողություն, հոգեկան հարուստ ներաշխարհ և երազելու բացառիկ հատկություն:*

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսմանառության առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն,փոխօգնություն):*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն : *Ծանոթացնել Հայ ժողովրդի հոգևոր և մշակութային ժառանգությանը համաշխարհային մշակույթի ոլորտում: Դաստիարակել անհատ՝ հարուստ հոգևոր ներաշխարհով: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն : *Ձևավորել գեղագիտական ճաշակ, սովորեցնել տեսել և գնահատել գեղեցիկը, մտածել գեղեցիկի մասին: Նպաստել գեղեցիկի, բարու ու ազնիվի նկատմամբ գիտակից, դրական վերաբերմունքին: Ծանոթացնել արվեստին ու նրա տեսակներին: Կյանքից բերել դրական օրինակներ, սեր ու հոգատարություն ներշնչել բնության նկատմամբ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն : *Դաստիարակել հայրենասիրության ինքնագիտակցություն ու հպարտություն: Մեծ հարգանք ձևավորել ազգային լեզվի, պատմության, հայերենի երկրի նկատմամբ: Դաստիարակել պատրաստակամություն հայրենիքի զինվոր դառնալու համար:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն : *Հետևել աշակերտների առողջ կենսակերպին, ֆիզիկապես կատարյալ մարդիկ դառնալուն: Նպաստել սպորտային խաղերով զբաղվելուն ու մարզվելուն:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն : *Դաստիարակել աշխատասիրություն, գիտակից վերաբերմունք աշխատանքի և աշխատողի նկատմամբ: Նպաստել տնային և համադպրոցական աշխատանքներին ակտիվ մասնակցությանը: Հասկացնել, որ միայն ազնիվ աշխատանքով կարելի է ձեռք բերել բարիք ու բարեկեցություն:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն : *Հետևել էկոլոգիական դաստիարակությանը: Հասկացողություն ձևավորել բնության պահպանության, բուսական ու կենդանական աշխարհի նկատմամբ: Սովորեցնել հետևյալ կարևոր ասույթը. «Ինչպես մենք ենք վերաբերվում բնությանը, այնպես էլ նա է վերաբերվում մեզ»:*

4. Դպրոց - ընտանիք կապը : *Ծանոթանալ յուրաքանչյուր աշակերտի ծնողի , ընտանիքի սոցիալական վիճակի և ընտանիքում իշխող բարոյահոգեբանական մթնոլորտի հետ: Փոխադարձ կապ պահպանել ծնողների հետ, հասնել միասնականության դաստիարակչական, ուսումնական և այլ բնույթի խնդիրներ լուծելու գործընթացներում: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամսաթիվը	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
01.09.23	1) Գիտելիքի օր: Կազմակերպչական աշխատանքներ: Դասագրքերի վիճակի ստուգումը և բաշխումը:	դասղեկ
08.09.23	2) Դասացուցակի և հերթապահության կազմումը: Դասարանական կանոնների մշակումը: Դասասենյակի մաքրման աշխատանքը:	դասղեկ, աշակերտ
15.09.23	3) Դասարանի անկյունի ձևավորումը:	դասղեկ, աշակերտ
22.09.23	4) Հայաստանի Անկախության օր: Էքսկուրսիա դեպի Սևանա լիճ:	դասղեկ
29.09.23	5) «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց»	դասղեկ
06.10.23	6) «Իմ բարեկամը՝ թաշկինակը»: «Իմ օրվա ռեժիմը»	դասղեկ
13.10.23	7) «Քո վառքագիծը՝ տանը և դպրոցում»	դասղեկ
20.10.23	8) «Ոսկե աշնան գույները» Միջավայրի գեղարվեստական օրինաչափու-թյունների ճանաչումը:	դասղեկ
03.11.23	9) «Ինչպե՛ս անել, որ չհիվանդանալ»	դասղեկ
10.11.23	10) «Ով շատ է ներում, նա ավելի է սիրում»: Զրույց ներման և սիրո մասին:	դասղեկ
17.11.23	11) «Ի՛նչ եմ ուզում դառնալ» Ծանոթացնել աշխատանքի, տարբեր մասնագիտությունների հետ:	դասղեկ
24.11.23	12) «Ո՛վ է լավ դուստր, որդի, քույր, եղբայր» Օգնել ծնողներին:	դասղեկ
01.12.23	13) «Ո՛վ է քո ընկերը: Ինչպես ես ընկերներ գտնում»: Զրույց:	դասղեկ
08.12.23	14) 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի տարելից:	դասղեկ
15.12.23	15) Նոր տարվա հանդեսի ծրագրի կազմում:	դասղեկ, աշակերտ
22.12.23	16) Նոր տարվա հանդեսին մասնակցություն	դասղեկ, աշակերտ
12.01.24	1) Ամանոր: Սուրբ Ծնունդ:	դասղեկ, աշակերտ
19.01.24	2) Աշխատանքի անհրաժեշտությունը՝ «Ով աշխատի, նա կուտի»	դասղեկ
26.01.24	3) Հայոց բանակի օր	դասղեկ, աշակերտ
02.02.24	4) «Սովորենք սովորեցնելով» : Օգնե՛լ, թե խանգարել ուսուցչին	դասղեկ
09.02.24	5) Զրույց ծխելու և ալկոհոլի վնասակար ազդեցության մասին	դասղեկ
16.02.24	6) Ի՛նչ է սերը ձեր կարցիքով	դասղեկ
23.02.24	7) Զրույց հայրենասիրության մասին	դասղեկ, աշակերտ
03.03.24	8) Ուժեղացնել սերը աշխատանքի նկատմամբ	դասղեկ
07.03.24	9) Մարտի 8–ը կանանց միջազգային տոն	դասղեկ

15.03.24	10) «Մեր հայրենիքը Հայաստանն է»: «Մենք հայ ենք»	դասղեկ, աշակերտ
22.03.24	11) «Գարուն է գալիս» :Գեղագիտական ճաշակի զարգացում:	դասղեկ
05.04.24	12) Գեղեցկության և մայրության օր	դասղեկ
12.04.24	13) «Ծիծաղը երկարացնում է մարդու կյանքը»	դասղեկ, աշակերտ
19.04.24	14) Սուրբ Զատիկ	դասղեկ
26.04.24	15) Եղեռնի օր	դասղեկ, աշակերտ
03.05.24	16) «Ով շատ կարդա, շատ կիմանա»	դասղեկ
10.05.24	17) Զրույց զոհված ազատամարտիկների մասին	դասղեկ, աշակերտ
17.05.24	18) «Քո տնկած ծառը թող քեզ հետ մեծանա»	դասղեկ
24.05.24	19) 2–րդ կիսամյակի և տարեկան գնահատականների հայտարարում	դասղեկ

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

	Ազգանուն, անուն, հայրանուն
Նախագահ	Գաբրիելյան Սիլվա
Անդամ	Ղուկասյան Աստղիկ
Անդամ	Չիլինգարյան Մելինե
Անդամ	Եղիյան Անահիտ

Դասարանի սոցիալական անձնագիրը

1. *Երեխաների թիվը դասարանում՝ __11_*
   ա) աղջիկ՝__5____
   բ) տղա՝__6_____

2. *Ընտանիքների թիվը՝___11___*
   ա) լրիվ կազմով՝_____10____
   բ) ոչ լրիվ կազմով՝____1__

3. *Սոցիալական անապահով ընտանիքների թիվը՝___4____*